

Թեստերի օրինակներ ճիշտ պատասխանի ընտրության ձևաչափով

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրաման

Հարց

Գիտության կոմիտեի նպատակներից է՝

- 1) **հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորմանը նպաստելը.**
- 2) հանրապետության գիտակրթական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրումը.
- 3) հանրապետության գիտատեխնիկական կադրերի պատրաստման համակարգի ձևավորումը.
- 4) գիտական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը:
(1, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 9, ենթակետ 2)

Հարց

Գիտության կոմիտեի խնդիրներից է՝

- 1) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի ձևավորման ու զարգացման ապահովումը.
- 2) գիտատեխնիկական ժամանակակից համակարգի ձևավորումը և զարգացումը.
- 3) **գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի ժամանակակից ենթակառուցվածքի ու տեղեկատվական համակարգի ձևավորմանն ու զարգացմանը, միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրման աջակցելը.**
- 4) գիտատեխնիկական համակարգի զարգացման և միջազգային տնտեսությանն ինտեգրմանն աջակցելը:
(3, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 10, ենթակետ 3)

Հարց

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը՝

- 1) **լրում է Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.**
- 2) քննում է Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները.
- 3) լրում է գործունեության ստուգման արդյունքները.
- 4) հանձնարարում է քննել Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները:
(1, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ.մայիսի 7-ի N 20-Լ հրամանի հավելված, կետ 13, ենթակետ 4)

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ է գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպությունը:

- 1) **Գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպությունը այն կազմակերպությունն է, որը անկախ իր կազմակերպական-իրավական ձևից, հիմնականում իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում է գիտական կադրերի պատրաստմամբ.**
 - 2) կազմակերպություն, որն իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն.
 - 3) կազմակերպություն, որն իրականացնում է գիտական գործունեություն.
 - 4) կազմակերպություն, որը զբաղվում է գիտական կադրերի վերապատրաստմամբ
- (1, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդ. 1)

Հարց

Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- 1) 1գիտության ժամանակակից ենթակառուցվածքի ձևավորման ապահովումը.
- 2) գիտության տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորման աջակցելը.
- 3) գիտության տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը և ղեկավարումը.
- 4) **գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը:**

(4, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդ. 12, մաս 1)

Հարց

Ինչպիսի՞ կազմակերպական-իրավական ձև կարող է ունենալ գիտական կազմակերպությունը

- 1) գիտական կազմակերպությունը կարող է ունենալ միայն ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձև.
- 2) **գիտական կազմակերպությունը կարող է ունենալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած առևտրային և ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձև կամ լինել հիմնարկ.**
- 3) գիտական կազմակերպությունը կարող է լինել միայն հիմնարկ.
- 4) գիտական կազմակերպությունը կարող է ունենալ ցանկացած առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձև:

(2, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդ. 6, մաս 1)

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք

Հարց

Ակադեմիայի հատուկ կարգավիճակի առանձնահատկություններն են՝

- 1) **Ակադեմիան անմիջականորեն ենթարկվում է կառավարությանը.**
- 2) Ակադեմիան անմիջականորեն ենթարկվում է ակադեմիայի նախագահին.
- 3) Ակադեմիան անմիջականորեն ենթարկվում է ՀՀ վարչապետին.
- 4) Ակադեմիան անմիջականորեն ենթարկվում է ՀՀ նախագահին:

(1, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդ. 4)

Հարց

Ակադեմիայի խնդիրներն են՝

- 1) հանրապետության հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների գերակա ուղղությունների ցանկերի սահմանումը.
- 2) գիտական և գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանն առնչվող հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկությունների ներկայացումը.
- 3) **լիազորված պետական մարմինների հետ հանրապետության հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների գերակա ուղղությունների ցանկերի առաջարկումը, գիտական և գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանն առնչվող օրենսդրության վերաբերյալ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանը առաջարկությունների ներկայացումը.**
- 4) **լիազորված պետական մարմինների հետ հանրապետության հիմնարար և կիրառական գիտական և գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրականացումը:**

(3, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, հոդ. 9)

«Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք

Հարց

Ո՞րն է գիտական և գիտատեխնիկական փորձաքննության սուբյեկտը

- 1) Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության սուբյեկտը միայն փորձաքննության պատվիրատուի գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ է.
- 2) Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության սուբյեկտը փորձաքննության պատվիրատուի, կազմակերպչի կամ փորձաքննություն կատարողի գործառույթներն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ է.
- 3) Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության սուբյեկտը միայն փորձաքննության կազմակերպչի գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ է
- 4) Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության սուբյեկտը միայն փորձաքննություն կատարողի գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ է:

2, «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

Հարց

Ովքե՞ր կարող են լինել անկախ փորձագետ

- 1) փորձագետ, որը փորձաքննություն կատարելու ընթացքում ներկայացնում է միայն պետության շահը.
- 2) փորձագետ, որը փորձաքննություն կատարելու ընթացքում ներկայացնում է գիտության կոմիտեի շահերը.
- 3) փորձագետ, որը փորձաքննություն կատարելու ընթացքում չի ներկայացնում որևէ կազմակերպության շահը.
- 4) փորձագետ, որը փորձաքննություն կատարելու ընթացքում ներկայացնում է իր շահերը:

3, «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

Հարց

Փորձաքննության հիմնական խնդիրներն են՝

- 1) փորձաքննության օբյեկտի համալիր ուսումնասիրությունը և փորձագիտական եզրակացության նախապատրաստումը.
- 2) փորձաքննության օբյեկտի հիմնավորված փորձագիտական եզրակացության տրամադրումը.
- 3) փորձաքննության օբյեկտի փորձագիտական եզրակացության պատրաստումն ու տրամադրումը.
- 4) փորձաքննության օբյեկտի համալիր ուսումնասիրությունը և հիմնավորված փորձագիտական եզրակացության պատրաստումն ու տրամադրումը.

4, «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք

Հարց

Ի՞նչ է պետական ինովացիոն քաղաքականությունը

- 1) տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ ուղղված ինովացիոն գործունեության զարգացմանն ու խթանմանը.
- 2) տնտեսական քաղաքականության տեսակ.
- 3) տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ ուղղված ինովացիոն գործունեության ապահովմանը.
- 4) տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ ուղղված ինովացիոն գործունեության աջակցմանը.

(1, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդ.2)

Հարց

Ի՞նչ է պետական ինովացիոն ծրագիրը

- 1) **ինովացիոն նախագծերի և միջոցառումների ամբողջություն, որի իրականացումն ապահովվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ.**
- 2) **ինովացիոն նախագծերի ամբողջություն, որի իրականացումն ապահովվում է մասնավոր կապիտալի ֆինանսավորմամբ.**
- 3) **ինովացիոն նախագծերի և միջոցառումների ամբողջություն, որի իրականացումն ապահովվում է մասնավոր ընկերությունների կողմից.**
- 4) **ինովացիոն նախագծերի և միջոցառումների ամբողջություն, որի իրականացումն ապահովվում է միայն համաֆինանսավորմամբ.**

(1, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդ.2)

Հարց

Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝

- 1) **վենչուրային, ներդրումային հիմնադրամների ստեղծման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ստեղծումը.**
- 2) **ներդրումային հիմնադրամների ստեղծման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ապահովումը.**
- 3) **վենչուրային հիմնադրամների ստեղծման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ապահովումը.**
- 4) **ինովացիոն գործունեության համար իրավական դաշտի ստեղծումը.**

(1, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդ. 7)

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ

Հարց

Ի՞նչ է նորմատիվ իրավական ակտը

- 1) **Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար.**
- 2) Միայն Ազգային ժողովի ընդունած օրենքները.
- 3) Միայն կառավարության ընդունած որոշումները.
- 4) Միայն վարչապետի ընդունած որոշումները:

(1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է անհատական իրավական ակտը

- 1) **վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.**
- 2) **Գրավոր փաստաթուղթ, որը վերաբերվում է միայն դրանում անհատապես նշված անձանց համար.**
- 3) **նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց.**
- 4) **Միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:**

(3, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց

Ի՞նչ է ներքին իրավական ակտը

- 1) **նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ**

աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից

- 2) միայն մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտը:
- 3) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն նշված կոնկրետ անձի կամ անձանց համար.
- 4) վարքագծի կանոն, որը վերաբերում է միայն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են.

(1, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)